

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության
ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու մասին

ՀՀ Լոռու մարզպետարանի Սպիտակի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի (65-2.3-17) ժամանակավոր թափուր պաշտոն

Գործակալության պետը՝

Սահմանում է Գործակալության աշխատակիցների տնային այցելությունների ժամանակացույցը, յուրաքանչյուր աշխատակցի սպասարկման տարածքը, ապահովում է Գործակալությունում տեղադրված համակարգչային տեխնիկայի անվտանգ շահագործման պայմանները, հաստատում է պետական նպաստի և այլ դրամական վճարների նշանակման, մերժման, դադարեցման, վերահաշվարկի կարգադրությունների, վճարման ցուցակների և դրանց տիտղոսաթերթերի, փոխադարձ հաշվետվության ակտերը և Գործակալության անունից պատրաստված գրությունները, մարզպետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության իրականացրած աշխատանքների ընթացքի վերաբերյալ, ապահովում է Մարզպետի կարգադրությունների և ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում Մարզպետին, առաջարկություններ է ներկայացնում՝ իր անմիջական ենթակայության տակ գտնվող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, կարգապահական տույժի ենթարկելու կամ խրախուսելու վերաբերյալ, առաջարկություններ է ներկայացնում Մարզպետին Գործակալության խորհրդակցական մարմիններ ստեղծելու մասին, Գործակալության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

-տույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում

Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-գրավոր դիմում

-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,

-աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում),

-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք

-մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի

-անձնագրի պատճենը

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչև ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացումը

Աշխատավարձի չափը՝ 212309 ՀՀ դրամ

Փաստաթղթերն ընդունվում են՝ ա/թ հոկտեմբերի 23-ից

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 26.10.2018թ.

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24, էլ. [hwugl'lori.andznakazm@mta.gov.am](mailto:lori.andznakazm@mta.gov.am))